ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
«Վաչե եւ Թամար Մանուկյան Մատենադարան»

ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ճուրջ 1700-ամյա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 132 գահակալների շարքում իր եկեղեցաշինական գործունեությամբ առանձնահատուկ տեղ է գրավում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Ընդհանրապես Նորին Սրբության գահակալության տարիները (1999 թվականից ցայսօր) նշանավորվել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բարգավաճմամբ եւ բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմամբ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում։ Սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռի արժանավոր գահակալի գործունեության մեջ առանցքային նշանակություն ունի եկեղեցաշինությունը, որի նպատակն է վերականգնել եւ ամրապնդել հայ ժողովրդի հոգեւոր կյանքը, պահպանել ազգային ինքնությունն ու մշակույթը, ստեղծել նոր ու գործուն հոգեւոր կենտրոններ։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդի եկեղեցաշինական գործունեությունն ընթացել եւ շարունակվում է երեք հիմնական ուղղություններով.

1. Նոր եկեղեցիների կառուցում։ *Նորին Սրբության գահակալության օրոք կառուցվել են բազմաթիվ նոր եկեղեցիներ՝ արձագանքելով թե՛ Հայաստանի բնակչության աճող հոգեւոր կարիքներին, թե՛ սփյուռքի հայ համայնքների ձգտումներին՝ ունենալու իրենց համախմբող սեփական հոգեւոր կենտրոնները։ Այս նոր եկեղեցիները կառուցվել են ինչպես Հայաստանի մեծ ու բազմամարդ բնակավայրերում, այնպես էլ սահմանամերձ եւ հեռավոր գյուղերում, ինչը վկայում է Հայոց Եկեղեցու սրտացավության, ազգաշահ ու պետականամետ գործելաոճի, իրավիճակը ճիշտ գնահատելու եւ դրան համապատասխան հիմնավորված միջոցառումների ձեռնարկման մասին։ Նոր եկեղեցիները եւ հոգեւոր կենտրոնները նպաստում են հայ ժողովրդի հավատքի վերածննդին եւ ամրապնդմանը,*

ինչպես նաեւ եկեղեցական-ծխական համայնքների կազմավորմանն ու զարգացմանը, հոգեւոր կյանքի աշխուժացմանը։

2. Հայ բազմադարյան մշակույթի խոսուն վկաների՝ վանական համալիրների ու եկեղեցիների հիմնանորոգում, վերակառուցում կամ վերանորոգում։ *Կարեւորագույն ուղղություն է եղել Հայաստանում եւ հայկական գաղթավայրերում պահպանված հայ եկեղեցական ճարտարապետության բազմաթիվ հուշարձանների պահպանումն ու վերականգնումը։ Այս գործընթացը նաեւ նպատակ ունի պահպանելու հայկական պատմամշակութային եւ ճարտարապետական ինքնատիպ ժառանգությունը, ինչպես նաեւ այդ եկեղեցիներին վերադարձնելու իրենց հոգեւոր դերն ու նշանակությունը։ Շատ դեպքերում վերակառուցման աշխատանքները ֆինանսավորվել են բարերարների կողմից, որոնք համախմբված են եղել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Վեհափառ Հայրապետի շուրջ։ Բազմադարյա վանական համալիրների ու եկեղեցիների վերակառուցումը նաեւ նպաստում է հայկական պատմամշակութային ժառանգության պահպանմանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, ինչը շատ կարեւոր է հատկապես ազգային ինքնագիտակցության բարձրացման եւ ազգային ինքնության պահպանման տեսանկյունից։*

3. Եկեղեցական համալիրների կառուցում եւ հոգեւոր-մշակութային հաստատությունների հիմնում։ *Նորին Սրբության եկեղեցաշեն գործունեությունը սահմանափակված չի եղել միայն նոր եկեղեցիների կառուցմամբ։ Կառուցվել եւ բարեկարգվել են նաեւ եկեղեցական համալիրներ, հոգեւոր-մշակութային ու կրթական կենտրոններ՝ հայորդյաց տներ, կիրակնօրյա դպրոցներ, ակումբներ, թանգարաններ, որոնք ծառայում են ամբողջ հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Եկեղեցու բարեպաշտ զավակների կրթական, հոգեւոր-ազգային ու մշակութային կարիքները բավարարելուն։ Սփյուռքում եւ Հայաստանի Հանրապետությունում կառուցված նոր եկեղեցիներն ու հոգեւոր-մշակութային հաստատություններն աստիճանաբար վերածվում են համայնքային կենտրոնների, որտեղ կազմակերպվում եւ զարգանում է ոչ միայն ազգային-հոգեւոր, այլեւ մշակութային, կրթական ու հասարակական-ներհամայնքային կյանքը։*

Հայաստանում հոգեւոր կյանքը վերազարթոնք ապրեց, եւ եկեղեցաշինությունը մեծ ծավալներ ընդունեց 1991 թ. անկախության հռչակումից հետո։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների անմիջական մասնակ-

ցությամբ ու առաջնորդությամբ՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունում հայկական եկեղեցական ճարտարապետությունը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց։ Ժամանակակից հայ ճարտարապետներն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր տեխնոլոգիաներ, լուծումներ ու մտահղացումներ, նորակառույց եկեղեցիները բացառապես նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարյան եկեղեցական ճարտարապետության լավագույն ավանդները։

Գարեգին Երկրորդ Վեհափառ Հայրապետը դեռեւս Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության ժամանակաշրջանում, բայց հատկապես կաթողիկոսական գահակալության առաջին իսկ տարիներից իր գործունեության կիզակետում է պահել նոր եկեղեցիների կառուցումն ու հոգեւոր կառույցների վերաշինումն ու հիմնանորոգումը։ Դրա խոսուն վկաներն են այն բազմաթիվ սրբավայրերը, որոնք կառուցվել, վերակառուցվել, հիմնանորոգվել ու բարեկարգվել են Նորին Սրբության գահակալության տարիներին։ Վեհափառ Հայրապետի օրոք կառուցվել ու վերանորոգվել են շուրջ 300 եկեղեցիներ եւ կրթական-մշակութային հաստատություններ հայաստանյան ու արտասահմանյան թեմերում։ Գարեգին Երկրորդ Հայրապետն իրավամբ վաստակել է «եկեղեցաշեն» *պատվանունը կրելու իրավունքը։*

Գարեգին Երկրորդ Վեհափառի գահակալության տարիներին կառուցված եկեղեցիներից նշանավոր են.

1. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ.

Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ *եկեղեցին կառուցվել է երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի նախաձեռնությամբ՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ։ Հայոց Հայրապետն իր ձեռքով հուշաքար է դրել ապագա մայր եկեղեցու կառուցման վայրում։ Եկեղեցու հիմնօրհնեքը կատարել է երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը 1997 թ. ապրիլի 7-ին՝ Աստվածածնի Ավետման տոնի օրը։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի նախագծով։ Այն եկեղեցական համալիր է՝ բաղկացած երեք եկեղեցիներից՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուց, Սուրբ Տրդատ թագավորի եւ Սուրբ*

Աշխեն թագուհու մատուռներից։ Եկեղեցու մուտքը զարդարում են կամարակապ զանգակատունն ու գավիթը։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. Ներսիսյանը 2001 թ. սեպտեմբերի 23-ին կատարեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման արարողությունը եւ մատուցեց առաջին Սուրբ Պատարագը։

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ 2011 թ. ապրիլի 30-ին մայրաքաղաք Երեւանում՝ Կաթողիկե Սուրբ Աստվածածին *եկեղեցու հարեւանությամբ, կատարվեց* Սուրբ Աննա *եկեղեցու հիմնարկեքի արարողությունը։ Ս. Աննա եկեղեցին եւ Ամենայն Հայոց Հայրապետի երեւանյան նստավայրը կառուցվել են տեր եւ տիկին Հրայր եւ Աննա Հովնանյանների բարերարությամբ։ Երեւանի Ս. Աննա նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 2015 թ. ապրիլի 30-ին՝ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի։*

1996–2002 թթ. կառուցված Ավանի Սուրբ Աստվածածին *եկեղեցու շինարարությանն իրենց օրհնությունն ու նյութական աջակցությունն են բերել Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Նավասարդ եպս. Կճոյանը։ Եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2002 թ. նոյեմբերի 9-ին։*

Երեւանի Նոր Արաբկիր թաղամասի Սուրբ Խաչ *եկեղեցու հիմնօրհնեքը տեղի է ունեցել 2013 թ.։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Արտակ Ղուլյանի նախագծով եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու ՀԲՄ հովանավորությամբ՝ ի դեմս Լուիզ Սիմոն Մանուկյանի։ Արաբկիրի Ս. Խաչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարել են տեր Նավասարդ արք. Կճոյանը եւ տեր Մուշեղ եպս. Բաբայանը 2022 թ. փետրվարին։*

Դավթաշեն թաղամասի Սրբոց Նահատակաց *եկեղեցու հիմնօրհնեքը 1996 թ. հուլիսի 31-ին կատարել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Գարեգին արք. Ներսիսյանը։ Եկեղեցին նվիրված է վասն հավատքի եւ վասն հայրենյաց նահատակված հայ քաջամարտիկների հիշատակին։ Եկեղեցին կառուցվել է Լեւոն Ումեդյանի նախագծով եւ Ռուբեն Գեւորգյանի հովանավորությամբ։ 2002 թ. նոյեմբերի 20-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Նավասարդ եպս. Կճոյանի ձեռամբ օծվել է*

Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու մկրտության ավազանը, իսկ առաջին Սուրբ եւ Անմահ Պատարագը եկեղեցում մատուցվել է 2003 թ. ապրիլի 6-ին։

Եռաբլուր պանթեոնի Սրբոց Վարդանանց Նահատակաց *եկեղեցու կառուցումն սկսվել է 1994 թ.՝ երջանկահիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի (Գարեգին Ա. Սարգիսյան, 1995–1999 թթ.) եւ Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ։ Ս. Վարդանանց Նահատակաց եկեղեցու կառուցումը հովանավորել են ամերիկաբնակ Հրաչ եւ Վիկտորիա Ոսկանյանները։ Եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը 1999 թ. կատարել է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Գարեգին արք. Ներսիսյանը։*

Զորավար Անդրանիկի թաղամասի *(նախկինում՝ Հարավարեւմտյան թաղամաս)* Սուրբ Երրորդություն *եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2001 թ. հունիսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ։ Նույն թվականին էլ սկսվել են եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները։ Սուրբ Երրորդություն եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով եւ ամերիկահայ ազգային բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի հովանավորությամբ։ 2005 թ. նոյեմբերի 19-ին, ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի, օծվել են Զորավար Անդրանիկ թաղամասի Ս. Երրորդություն եկեղեցու խաչերը, իսկ հաջորդ օրը՝ նոյեմբերի 20-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվել է Ս. Երրորդություն եկեղեցու օծման սրբազան արարողությունը։*

Ներքին Զարբախի Սուրբ Խաչ *եկեղեցու կառուցումը նախաձեռնել ու հովանավորել է համայնքի բնակիչ Խաչատուր Վարդանյանը։ Եկեղեցու կառուցումը սկսվել է 1996 թ. ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի նախագծով։ Տասը տարի անց՝ 2006 թ. հոկտեմբերին, հիմնականում ավարտվել էին եկեղեցու շինարարական, ներքին հարդարման եւ տարածքի բարեկարգման ու կանաչապատման աշխատանքները։ 2006 թ. նոյեմբերի 10-ին, ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Նավասարդ արք. Կճոյանի, օծվել են Ներքին Զարբախի Սուրբ Խաչ եկեղեցու չորս սյուները, ավանդատները, մկրտարանը, սրբապատկերները, խաչվառը։ Նոյեմբերի 11-ին Նավասարդ սրբազանն*

օծել է նաեւ Սուրբ Խաչ եկեղեցու ավագ խորանը, այնուհետեւ մատուցվել է անդրանիկ Սուրբ եւ Անմահ Պատարագը։

Նոր Նորֆի Սուրբ Սարգիս *եկեղեցու հիմնօրհնեքը կատարվել է 1998 թ.։ Եկեղեցին կառուցվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ եւ Նյույորքաբնակ բարերար Սարգիս Գաբրիելյանի հովանավորությամբ։ Եկեղեցու կառուցման գործում իր գնահատելի ավանդն է ունեցել նաեւ ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահանգից տեր Գառնիկ ավագ քահանա Հալաջյանը։ Ս. Սարգիս եկեղեցու կառուցումն ավարտվել է 2000 թ.։ Օծման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2000 թ. ապրիլի 30-ին։*

Նոր Նորֆի Սուրբ Աստվածածին *եկեղեցին կառուցվել է Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարան-հուշահամալիրի հարեւանությամբ, որի ճարտարապետն է Ալբերտ Սոխիկյանը։ 2014 թ. հոկտեմբերի 12-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ տեր Նավասարդ արք. Կճոյանի ձեռամբ օծվել է Ս. Աստվածածին նորակառույց եկեղեցու սուրբ սեղանը։*

1990–1997 թթ. «Տիգրան Մեծ» կամավորական ջոկատի հրամանատար Արմենակ Արմենակյանի ու ջոկատի ազատամարտիկների նախաձեռնությամբ եւ Նորք թաղամասի բնակչության աջակցությամբ սկսվել է Նորֆի Սուրբ Մարիամ Աստվածածին *եկեղեցու հիմնակառուցումը։ Վերականգնման նախագծի հեղինակը Միշա Հակոբյանն է։ Նորքի բնակիչների եւ «Նորք-Մարաշ հայրենակցական միության» հանգանակած միջոցներով ավարտին է հասցվել եկեղեցու կառուցման աստվածահաճո գործը։ Նորակառույց Ս. Մարիամ Ատվածածին եկեղեցին օծվել է 2002 թ. հոկտեմբերի 26-ին։*

Նուբարաշենի Սրբոց Նահատակաց *եկեղեցու կառուցումը սկսվել է 2012 թ.։ Եկեղեցին կառուցվել է ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանի նախագծով եւ Գ. Ծառուկյանի հովանավորությամբ։ 2015 թ. ապրիլի 25-ին, ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի է ունեցել Նուբարաշենի նորակառույց Սրբոց Նահատակաց եկեղեցու օծման սրբազան արարողությունը։*

2. ՄԱՍՅԱՑՈՏՆԻ ԹԵՄ

(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով հռչակվել է 2021 թ. հունվարի 11-ին).

Արտաշատի Սուրբ Հովհաննես Ավետարանիչ *եկեղեցու հիմնարկեքը 2002 թ. հոկտեմբերի 29-ին կատարել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Եկեղեցին կառուցվել է ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանի եւ ճարտարապետ Էմմա Ֆահրադյանի նախագծով ու ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եւ Աբրահամյան ընտանիքի բարերարությամբ։ 2015 թ. մայիսի 31-ին Գարեգին Երկրորդ Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվել է Արտաշատ քաղաքի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը։*

Մասիսի տարածաշրջանի Դաշտավան գյուղի եկեղեցու շինարարությունը սկսվել է 2012 թ.։ Սուրբ Աստվածածին եկեղեցու ճարտարապետը Հրաչյա Գասպարյանն է, կառուցման նախաձեռնողն ու հովանավորը՝ Մուրադյան ընտանիքը՝ հանձին Սահակ Մուրադյանի։ Ս. Աստվածածին եկեղեցին կենտրոնագմբեթ խաչաձեւ կառույց է, կառուցված է հիմնականում կարմիր սրբատաշ տուֆաքարերով։ Դաշտավանի Սուրբ Աստվածածին *նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2018 թ. հուլիսի 6-ին՝ ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի։*

Դվինի Սուրբ Հարություն *եկեղեցու հիմնօրհները կատարվել է 1996 թ.՝ ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի։ Ս. Հարություն եկեղեցին Խորհրդային պետության փլուզումից հետո նորանկախ Հայաստանում հիմնադրված առաջին եկեղեցին է։ 2000 թ. մայիսի 3-ին Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսավորությամբ կատարել է նորակառույց Ս. Հարություն եկեղեցու օծման արարողությունը։*

Մասիսի Սուրբ Գեւորգ *եկեղեցին, որը գտնվում է քաղաքի գերեզմանատան տարածքում, կառուցվել է ճարտարապետ Հրաչյա Գասպարյանի նախագծով՝ Գագիկ Ադիբեկյանի եւ նշանավոր բոնցքամարտիկ Արթուր Աբրահամի բարերարությամբ։ Ս. Գեւորգ եկեղեցին խաչաձեւ կենտրոնագմբեթ կառույց է, շարված է դեղնավուն սրբատաշ տուֆաքարերով։*

եկեղեցին օծվել է 2009 թ. նոյեմբերի 1-ին՝ ձեռամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի։

1991 թ. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Գարեգին արք. Ներսիսյանի օրհնությամբ դրվել են Մասիս քաղաքի Սուրբ Թադեոս *եկեղեցու հիմքերը։ Եկեղեցու ճարտարապետներն են բարեհիշատակ Արթուր Թարխանյանն ու իր դուստր Անահիտ Թարխանյանը։ 2003 թ. նոյեմբերի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գահակալության 4-րդ տարեդարձի օրը, կատարել է Մասիս քաղաքի Ս. Թադեոս եկեղեցու հիմքերի օրհնությունը։ Եկեղեցու շինարարական աշխատանքների պատասխանատվությունը ստանձնեցին տեր եւ տիկին Վարդանյանները։ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջոցներով կառուցումը ավարտին հասցրին իրենց որդիներ Միքայել եւ Կարեն Վարդանյանները։ 2015 թ. հոկտեմբերի 4-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Մասիս քաղաքի Սուրբ Թադեոս եկեղեցու օծման արարողությունը։*

Մարմարաշենի Սուրբ Գեւորգ *եկեղեցին կառուցվել է 2000–2002 թթ.։ Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է 2000 թ. դեկտեմբերի 1-ին։ Ս. Գեւորգ եկեղեցին կառուցվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700–ամյակի առթիվ։ Նորակառույց եկեղեցու օծումը կատարվել է 2002 թ. նոյեմբերի 4-ին՝ ձեռամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի։ Ս. Գեւորգ եկեղեցու օծումը նվիրվել է Հայոց Հայրապետի գահակալության երրորդ տարեդարձին։*

Նորաբացի Սուրբ Աստվածածին *եկեղեցու կառուցումը սկսվել է 2011 թ. մարտի 20-ին եւ տեւել մոտ 3 տարի։ Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2011 թ. մայիսի 10-ին՝ ձեռամբ Նավասարդ արք. Կճոյանի։ Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը մեծ հանդիսավորությամբ կատարվել է 2014 թ. հուլիսի 26-ին՝ Քրիստոսի Պայծառակերպության (Այլակերպություն, Վարդավառ) տոնի նախընթաց շաբաթ օրը։*

Վեդի քաղաքում ժամանակին հին, կիսաքանդ մատուռ կար, որի տեղում Վեդիի բնակիչ Էդգար Շաբոյանը, իր ընտանիքի անդամների օգնությամբ, կարմիր տուֆից կառուցել է Սուրբ Աստվածածին եկեղեցին։ Վեդիի Սուրբ Աստվածածին *եկեղեցին օծվել է 2001 թ. օգոստոսի 12-ին՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման (Խաղողօրհնեք) տոնին՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տեր Նավասարդ արք. Կճոյանի։*

3. ՇԻՐԱԿԻ ԹԵՄ.

Գյումրիի Սուրբ Հակոբ Մծբնեցի *եկեղեցին Հայաստանի Երրորդ Հանրապետության փառահեղ եկեղեցական կառույցներից է։ Եկեղեցու շինարարությունն ավարտվել է 2002 թ. եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի ձեռամբ օծվել է 2002 թ. օգոստոսի 29-ին։ Եկեղեցին կառուցվել է ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի Իսթոն քաղաքի բնակիչներ Սարգիս եւ Բաբի Հակոբյան ամուսինների բարերարությամբ։ Ս. Հակոբ Մծբնեցի եկեղեցին նախագծել է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը, հոյակերտ քանդակները հեղինակել է Գետիկ Բաղդասարյանը, իսկ շինարարական աշխատանքները ղեկավարել է Մկրտիչ Լամբարյանը։*

Գտաշենի Սուրբ Կարապետ *եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարել է Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը 2010 թ. դեկտեմբերի 6-ին։ Մոսկվայում հաստատված ջավախեցի գործարար Կարապետ Պողոսյանի բարերարությամբ եկեղեցին կառուցվել է 2011 թ.։ Վարդագույն սրբատաշ տուֆով կառուցված եկեղեցին միանավ բազիլիկ է՝ քառասյուն փոքրիկ գմբեթով. միակ մուտքն արեւմտյան կողմում է։ Տ. Միքայել եպս. Աջապահյանը Սուրբ Կարապետ եկեղեցին հանդիսավորապես օծել է 2011 թ. սեպտեմբերի 3-ին։*

Եղնաջրի Սուրբ Սարգիս *եկեղեցին կառուցվել է 2006 թ. «KASA» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի բարերարությամբ։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ Ս. Սարգիս եկեղեցու մուտքն արեւմտյան կողմից է։ Սուրբ Սարգիս եկեղեցին օծվել է 2007 թ. օգոստոսի 8-ին ձեռամբ Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի։*

Զույգաղբյուրի Սուրբ Խաչ *եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ 2007 թ.։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ եկեղեցին կառուցվել է ծագումով զույգաղբյուրցի Վոլոդյա Մաթեւոսյանի բարերարությամբ։ Սուրբ Խաչ եկեղեցին տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ օծվել է 2008 թ. հունիսի 28-ին։*

Կաֆավասարի Սուրբ Նարեկ *եկեղեցու շինարարական աշխատանքներն սկսվել են 2008 թ. օգոստոսի 23-ին եւ ավարտվել նույն թվականի հոկտեմբերի 30-ին։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցու կառուցումը հովանավորել է ծնունդով կաքավասարցի, արդարադատության գեներալ-մայոր Աշոտ Մարտիրոսյանը։ Սուրբ Նարեկ եկեղեցու օծ-*

ման հանդիսավոր արարողությունը կատարել է Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը 2009 թ. օգոստոսի 1-ին։

Կրասարի Սուրբ Բարսեղ *եկեղեցին կառուցվել է Գառնիկ, Գագիկ, Տարոն եւ Տավրոս Պապիկյանների բարերարությամբ։ Կարմիր սրբատաշ տուֆով կառուցված եւ բազիլիկ հորինվածքով եկեղեցուն արեւմտյան կողմից կից է զանգակատունը, որն ունի ութսյունանի բոլորաշեն գմբեթ։ Եկեղեցու մուտքն արեւմտյան կողմից է։ Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը Կրասարի Սուրբ Բարսեղ եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը կատարել է 2016 թ. օգոստոսի 17-ին, իսկ օծման հանդիսավոր արարողությունը՝ 2017 թ. հուլիսի 29-ին։*

Ղարիբջանյանի Սուրբ Հոգի *եկեղեցին կառուցվել է 2008 թ. Սամվել Տոնոյանի բարերարությամբ՝ ի հիշատակ իր վաղամեռիկ կնոջ՝ Սաթենիկ Տոնոյանի։ Եկեղեցին նախագծել է «Երանգ» ՍՊԸ-ի տնօրեն Անատոլի Դոգուզովը։ Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանը Ղարիբջանյանի Սուրբ Հոգի եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարել է 2007 թ. մայիսի 4-ին, իսկ օծման հանդիսավոր արարողությունը՝ 2013 թ. օգոստոսի 31-ին։*

Շիրակավանի Սուրբ Աստվածածին *եկեղեցին 2016 թ. կառուցվել է Մոսկվայում հաստատված, ծնունդով շիրակավանցի Արթուր, Վահան եւ Արման Թավրիզյան եղբայրների բարերարությամբ ու համայնքապետ Մարատ Մկրտչյանի ջանքերով՝ ի հիշատակ բարերարների հոր՝ Ստյոպա Թավրիզյանի։ Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Ռաֆայել Եղոյանը։ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է 2015 թ. հունիսի 4-ին, իսկ մեկ տարի անց նույն օրը՝ հունիսի 4-ին էլ Միքայել սրբազանը կատարել է Սուրբ Աստվածածին եկեղեցու նավակատյաց հանդեսը։*

4. ԱՐԹԻԿԻ ԹԵՄ

(Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով հռչակվել է 2012 թ. դեկտեմբերի 2-ին).

Լեռնակերտ գյուղի մուտքը զարդարող Սուրբ Վարդան (Սրբոց Վարդանանց) *եկեղեցու կառուցումը նախաձեռնել եւ իրագործել է Ռուսաստանի*

Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում հաստատված լեռնակերտցի գործարար Գագիկ Հովհաննիսյանը։ Խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցին կառուցվել է 2005–2006 թթ.։ Շիրակի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ձեռամբ 2006 թ. հոկտեմբերի 28-ին օծվել է Սուրբ Վարդան եկեղեցու խաչը, իսկ 2007 թ.՝ եկեղեցին։

5. ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄ.

Ալավերդու Սուրբ Գրիգոր Նարեկացի *եկեղեցին, որի հիմնարկեքի արարողությունը տեղի է ունեցել 2000 թվականի նոյեմբերի 18-ին։ Եկեղեցու կառուցմանն ու կահավորմանը իրենց աջակցությունն են բերել Գուգարաց թեմը՝ ի դեմս թեմական առաջնորդ, Գերաշնորհ տեր Սեպուհ եպիսկոպոս Զուլչյանի, Ալավերդու տարբեր հիմնարկ-ձեռնարկություններ, հատկապես՝ «Մանես-Վալեքս լեռնամետալուրգիական կոմբինատը»՝ տնօրեն Վալերի Մեջլումյանի գլխավորությամբ, բնակչությունը՝ կազմակերպված հանգանակության միջոցով։ 2001 թվականի նոյեմբերի 11-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հանդիսապետությամբ, հոգեւոր դասի մասնակցությամբ եւ բազմահազար հավատացյալների ներկայությամբ եկեղեցին օծվել է եւ դարձել գործող եկեղեցի։*

Արջովիտի Սուրբ Գեւորգ *խոնարհված եկեղեցուց (հավանաբար՝ Դ. դար առաջին կես պահպանվել էր հիմնական ծավալը՝ մինչեւ գմբեթակիր կամարները։ Կանադահայ անանուն բարերարի, տեր եւ տիկին Էվրենսելների ու «Հայաստան» համահայկական հիմնադրամի Կանադայի Մոնրեալի շրջանի տեղական մարմնի ֆինանսավորմամբ 1999 թ. սկսվել եւ 2011 թ. ավարտվել են Սուրբ Գեւորգ եկեղեցու վերականգնման աշխատանքները։ Վերականգնման նախագծի հեղինակն է ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը։ 2001 թ. հունիսի 21-ին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Զուլչյանի եւ մասնակցությամբ թեմի հոգեւոր դասի ու հավատացյալների, օծվել է վերականգնված Սուրբ Գեւորգ եկեղեցին։*

Սպիտակի Սուրբ Հարություն *եկեղեցու կառուցումը նախատեսել էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը։ Ս. Հարություն եկեղեցու հիմնաքարերի օծման եւ հիմնարկեքի արարողությունը տեղի է ունեցել 1997 թ. օգոստոսի 10-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կա-*

թողիկոսի հանդիսապետությամբ։ Եկեղեցին կառուցվել է 1997–2000 թթ.՝ Սպիտակի աղետալի երկրաշարժից տասը տարի անց՝ «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ» կազմակերպության միջոցներով։ Ս. Հարություն եկեղեցին նախագծել է ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը։ Սուրբ Հարություն եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 1999 թ. դեկտեմբերի 23-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ։

Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի *եկեղեցին կառուցվել է 2003–2005 թթ.։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2002 թ. մայիսին կատարել է Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու հողօրհնեքի, իսկ 2003 թ. հունիսին՝ հիմնօրհնեքի արարողությունները։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Ռուբեն Ազատյանի նախագծով, ամերիկաբնակ տեր եւ տիկին՝ Սարգիս եւ Հռութ Բեդեւյանների բարերարությամբ։ Ի նշանավորումն սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ երկի՝ Նարեկ աղոթագրքի 1000-ամյա հոբելյանի տոնակատարությունների (2003 թ.), նորակառույց եկեղեցին անվանակոչվեց Սուրբ Գրիգոր Նարեկացի։ 2005 թ. հոկտեմբերի 23-ը՝ Ս. Խաչի գյուտի տոնը, նշանավորվել է Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու օծման հանդիսավոր արարողությամբ, որը կատարել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը։*

Վանաձորի Սուրբ Սարգիս *եկեղեցին կառուցվել է 2000 թ.։ Ս. Սարգիս եկեղեցին կառուցվել է Գուգարաց թեմի առաջնորդարանի ընդարձակ բակում։ 2000 թ. դեկտեմբերի 10-ին Գուգարաց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Սեպուհ Սրբազանի ձեռամբ կատարվել է նորակառույց Ս. Սարգիս եկեղեցու զանգակատան խաչի օծման արարողությունը։ 2000 թ. դեկտեմբերի 28-ին մեծ հանդիսավորությամբ տեղի է ունեցել Ս. Սարգիս եկեղեցու օծման եւ առաջնորդարանի բացման արարողությունը։ Նորակառույց եկեղեցու նավակատյաց հանդեսը կատարել են Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ տեր Սեպուհ եպիսկոպոս Զուլչյանը եւ Ամերիկայի արեւմտյան թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ տեր Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը։*

Տաշիրի Սուրբ Սարգիս *եկեղեցին կառուցվել է ռուսաստանաբնակ հայտնի գործարար Սամվել Կարապետյանի ու իր եղբայր Կարեն Կարապետյանի բարերարությամբ։ Սրբատաշ տուֆաքարերով կառուցված եկեղեցին խաչաձեւ կենտրոնագմբեթ կառույց է։ Նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարե-*

գին Երկրորդ կաթողիկոսի ձեռքով 2000 թ. հոկտեմբերի 3-ին։ Այդ օրը Վեհափառը սրբալույս մյուռոնով օծել է եկեղեցու սուրբ սեղանը, որից հետո Նորին Սրբությանն ուղեկցող տեր Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը, տեր Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը եւ թեմական առաջնորդ տեր Սեպուհ եպիսկոպոս Զուլչյանը օծել են եկեղեցու սյուներն ու մկրտության ավազանը։ Սրբազան արարողությունից հետո Հայոց հայրապետն իր շնորհավորանքի խոսքն ու պատգամն է հղել եւ օրհնությունն է բաշխել ներկաներին։

6. ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄ.

Աղավնատուն գյուղի Սուրբ Աննա *եկեղեցու շինարարությունը տեւել է 3 տարի (2010–2012 թթ.)։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Հովհաննես Սանամյանի նախագծով եւ մոսկվաբնակ գործարար Վահան Ավագյանի բարերարությամբ։ Սուրբ Աննա եկեղեցին օծվել է 2012 թ. հոկտեմբերի 21-ին՝ Արմավիրի թեմի առաջնորդ տեր Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռքով։*

Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի *եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2012 թ.։ Ճարտարապետ Միքայել Մկրտչյանի նախագծով կառուցված Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու բարերարը Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի նախագահ, եկեղեցու ատենապետ Կարեն Մկրտչյանն է։ Եկեղեցու օծումը կատարվել է 2014 թ. մայիսի 31-ին։*

Դալարիկի Սուրբ Վարդան *եկեղեցու հիմնարկեքը կատարել է տեր Սիոն եպիսկոպոս Ադամյանը 2013 թ. նոյեմբերի 1-ին։ Եկեղեցին կառուցվել է 2013–2015 թթ.։ Ներքուստ՝ խաչաձեւ, արտաքուստ՝ ուղղանկյունանիստ կենտրոնագմբեթ եկեղեցին կառուցվել է սրբատաշ կարմիր տուֆաքարերով՝ Սեդրակ Վարդանյանի նախագծով։ Ս. Վարդան եկեղեցու կառուցումը հովանավորել է «Բաղրամյանշին» ընկերության ղեկավար, ծնունդով դալարիկցի Գագիկ Վարդանյանը։ Դալարիկ գյուղի Ս. Վարդան եկեղեցին, Հայ Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի առաջնորդ տեր Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռքով, հանդիսավորապես օծվել է 2015 թ. սեպտեմբերի 25-ին։*

Մեծամոր քաղաքի *Սուրբ Ղազար եկեղեցին կառուցվել է 2002 թ. ամերիկաբնակ Զավեն եւ Ազատուհի Դադեկյան ամուսինների բարերարությամբ եւ ճարտարապետ Խաչիկ Դանիելյանի նախագծով։ Եկեղեցին*

ունի խաչաձեւ կենտրոնագմբեթ եկեղեցիներին բնորոշ հորինվածք եւ համաչափություններ։ Գմբեթի թմբուկին կան պատուհաններ, որոնք բոլորված են զարդաքանդակ շրջանակներով։ Կառուցվել է սրբատաշ տուֆաքարերով։ Սուրբ Ղազար եկեղեցին օծվել է 2005 թ. հոկտեմբերի 22-ին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ։

7. ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄ.

Մարզկենտրոն Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց *եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է դեռեւս 1996 թ. նոյեմբերի 25-ին երջանկահիշատակ Գարեգին Ա. Սարգիսյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1995–1999 թթ.) հանդիսապետությամբ։ Եկեղեցու կառուցման հովանավորությունն ստանձնել էր Սյունիքի մարզպետարանը, որի ներդրումն ամբողջացել էր ժողովրդի կատարած հանգանակությամբ ու մի քանի բարեպաշտ հայորդիների նվիրատվություններով։ Կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին ՀՀ-ի անկախությունից հետո Սյունիքի մարզում կառուցված առաջին եկեղեցին է, որի նավակատիքի հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2001 թ. դեկտեմբերի 1-ին՝ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի օրը։ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով օծվել ու սրբագործվել է Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին։*

Շինուհայրի Սուրբ Գրիգոր Տաթեւացի *եկեղեցու կառուցման նախաձեռնողը Տաթեւի վանքի վանահայր տեր Միքայել վարդապետ Գեւորգյանն է։ Եկեղեցու ճարտարապետական նախագիծը կազմել է Աշոտ դպիր Հակոբյանը։ Եկեղեցու հիմնօրհնեքը 2018 թ. մայիսի 17-ին հանդիսավորությամբ կատարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը։ Նորակերտ աղոթատունը մեկտեղել է հայ ավանդական եկեղեցական ճարտարապետության լավագույն եւ Սյունիքի ժողովրդական ճարտարապետության շինարարական ավանդույթները։ Տեղական շինաքարերով կառուցված եկեղեցին հիացնում է սրբատաշ ու «գորիսյան» շարվածքների արհեստավարժ համադրությամբ։ 2022 թ. հոկտեմբերի 8-ին նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, գերաշնորհ տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ տեր Արտակ եպիսկոպոս Տիգրանյանը։*

Դավիթ Բեկ գյուղի Սուրբ Գայանե *եկեղեցին կառուցվել է 2008 թ.՝ հայտնի գործարար Միրիկ Մնացականյանի բարերարությամբ։*

Շաֆիի Սուրբ Աստվածածին *եկեղեցին կառուցվել է 2004 թ.։ Եկեղեցու կառուցումը հովանավորել է ծնունդով մեղրեցի, որոշ ժամանակ Շաքիում բնակված, այնուհետեւ Մոսկվայում հաստատված Նվեր Օհանյանը։*

Տոլորսի Սուրբ Հռիփսիմե *եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2012 թ. հունիսին՝ ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, գերաշնորհ տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանի, իսկ խաչօրհնեքի արարողությունը՝ նույն տարվա դեկտեմբերին։ Եկեղեցու կառուցումն ավարտվել է նույն տարվա վերջին։ 2014 թ. հոկտեմբերի 11-ին կատարվել է Տոլորս գյուղի Սուրբ Հռիփսիմե եկեղեցու զանգի տեղադրման արարողությունը։*

Դարբասի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հիմնարկեքի արարողությունը կատարվել է 2007 թ.։ Կառույցը նախագծել են ճարտարապետներ Նունե Պետրոսյանը, Մարտին Զորոյանը եւ Մանվել Համբարձումյանը։ Սուրբ Ստեփանոս եկեղեցու նավակատյաց հանդեսը կատարվել է 2010 թ. մայիսի 5-ին։

8. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄ.

Արագածոտնի թեմի տարածքում ՀՀ անկախացումից հետո կառուցված եւ օծված առաջին եկեղեցին Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին *եկեղեցին է։ Նոր Եդեսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնօրհնեքը կատարվել է 1997 թ.։ Եկեղեցին կառուցվել է արգենտինահայ Գեւորգ (Խորխե) եւ Ռոսա Սարաֆյանների բարերարությամբ, շինարարական աշխատանքների վերահսկողությունը բարերարները վստահել էին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն Լավրենտի Բարսեղյանին։ Եկեղեցու կառուցումն ավարտվել է 1999 թ., այնուհետեւ կատարվել է եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը։*

Ջրնաղ գյուղի Սուրբ Ստեփանոս *եկեղեցին կառուցելու որոշումն անմիջականորեն կայացվել էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Հայրապետի ներկայությամբ, երբ 2002 թ. Վեհափառ հայրապետն այցելել էր Ջքնաղ։ 2002 թ. հոկտեմբերի 15-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարվել է հիմնօրհնեքի արարողություն։ Եկեղեցու կառուցման հովանավորությունն ստանձնել էր Գառնիկ եւ Անժելա Հովսեփյանների բարեպաշտ ընտանիքը։ Նորակառույց Սուրբ Ստեփանոս եկեղեցին օծվել է 2004 թ.*

հունիսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի ձեռամբ։ Մինչ այդ Հովսեփյանների բարերարությամբ վերակառուցվել, ապա վերաօծվել էր գյուղի Սուրբ Նարեկ մատուռը (2003 թ.)։

Բերքառատի Սուրբ Նշան *եկեղեցին կառուցվել է ծնունդով բերքառատցի, գործարար Արսեն Ամիրխանյանի բարերարությամբ։ Մոտ մեկ տարի տեւած շինարարական աշխատանքներն ավարտվել են 2010 թ., եւ 2011 թ. օգոստոսի 13-ին Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ հանդիսավորությամբ օծվել է նորակերտ Սուրբ Նշան եկեղեցին։*

Ղազարավանի Սուրբ Նարեկ (Սուրբ Գրիգոր Նարեկացի) *եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1998 թ. Արագածոտնի թեմի այն ժամանակվա առաջնորդ տեր Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի ձեռքով։ Եկեղեցու կառուցումը հովանավորել է ռուսաստանաբնակ բարերար Կարապետ Նազարյանը։ 2023 թ. մայիսի 9-ին, ձեռամբ Արագածոտնի թեմի բարեխնամ առաջնորդ, Գերաշնորհ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի, հանդիսավորապես օծվել ու սրբագործվել է Ղազարավանի Սուրբ Նարեկ եկեղեցին։*

2018 թվականից Արագածոտնի թեմի Ղազարավան գյուղի Սուրբ Նարեկ եկեղեցի է տեղափոխվել եւ թեմական առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի հայրական հոգածության ներքո իր գործունեությունն է իրականացնում կանանց մենաստանը։ Այն Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով ստեղծվել է դեռեւս 2000 թ. մայիսի 11-ին։ Մենաստանն սկզբնական շրջանում գործել է Վաղարշապատի Ս. Հռիփսիմե վանքում, այնուհետեւ Հաղպատի վանական համալիրում, ապա Վաղարշապատի Ս. Գայանե վանքում, իսկ 2018 թ. հաստատվել է Ղազարավանի Ս. Նարեկ եկեղեցում։ Ղազարավանի մենաստանն այժմ Հայաստանում կանանց միակ գործող վանքն է։ Մենաստանում ապրում են ութ միանձնուհիներ, որ կտրված են աշխարհիկ կյանքից եւ ծառայում են Աստծուն։

Ագարակի Սուրբ Աստվածածին *մատուռի կառուցման հովանավորն է ռուսաստանաբնակ բարերար, ծնունդով ագարակցի Հրաչյա Պողոսյանը։ Կառույցի հիմքերն ու յոթ քարերը օրհնել է տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, իսկ շինարարական հիմնական աշխատանքներն ընթացել են 2008 թ. գարնանից մինչեւ նույն թվականի սեպտեմբեր ամիսը։ Մատուռը կառուցվել է ճարտարապետ Ա. Դավայանի նախագծով։ Ագա-*

րակ գյուղի Նորակառույց Սուրբ Աստվածածին մատուռի օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ, 2008 թ. հոկտեմբերի 4-ին։

Արտաշավանի «Սուրբ Խաչ» հուշարձանի եւ «Հույսի խորանի» *հարեւանությամբ 2013 թ. հոկտեմբերի 21-ին Արագածոտնի թեմական առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ կատարվել է* Սրբոց Հրեշտակաց *եկեղեցու հիմնարկեքի արարողությունը։ Նորահիմն եկեղեցին կառուցվել է «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախագահ Ա. Հովսեփյանի բարերարությամբ եւ «Թովմասյան» հիմնադրամի կողմից։ Անզուգական Սրբոց Հրեշտակաց եկեղեցին իր տեսակի մեջ եզակի է. կառուցվել է ժայռի վրա, կերտվել է ձյունաթույր մարմարից, իսկ կողապատերն ու գմբեթը ապակյա են։ Եկեղեցին կառուցվել է ճարտարապետ Անդրանիկ Սարգսյանի նախագծով։ 2021 թ. սեպտեմբերի 18-ին, ձեռամբ Արագածոտնի թեմական առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի, կատարվել է Սրբոց Հրեշտակաց եկեղեցու խաչի օծման եւ տեղադրման, «Հավերժների այգու» եւ խաչքարի բացման արարողությունը։ 2021 թ. հոկտեմբերի 25-ին* «Հավերժների այգում», *որի հատակագիծն ունի հավերժության խորհրդանշանի տեսք, տրվել է ծառատունկի մեկնարկը, որին մասնակցել են գիտության, մշակույթի եւ սպորտի ականավոր ներկայացուցիչներ, ինչպես նաեւ 44-օրյա պատերազմում հավերժացած հերոսների ծնողներ ու հարազատներ։*

Գեղադիրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ *եկեղեցու կառուցումը հովանավորել է մոսկվաբնակ բարերար, ծնունդով գեղադիրցի Կառլեն Գեւորգյանը։ Եկեղեցին նախագծել է ճարտարապետ Հրանտ Կարապետյանը։ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հիմնարկեքի հանդիսավոր արարողությունը կատարել է Արագածոտնի թեմի առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը 2015 թ. մայիսի 12-ին։ Եղեկեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Արագածոտնի թեմի առաջնորդ, Գերաշնորհ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ Սուրբ խաչի Գյուտի տոնին՝ 2017 թ. հոկտեմբերի 29-ին, որին այդ տարի համընկել էր բարեբարի ծննդյան օրը։*

Վերին Սասնաշենի Սուրբ Վարդան *եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը կատարվել է 2018 թ. մայիսի 12-ին։ Եկեղեցու կառուցման աշխատանքներն ընթացել են արմատներով մշեցի, սակայն ՌԴ Արմավիր*

քաղաքում ծնված ու մեծացած Սարկիսյան եղբայրների հովանավորությամբ։ 2019 թ. նոյեմբերի 12-ին Արագածոտնի թեմի առաջնորդ Գերաշնորհ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ հանդիսավորապես կատարվել է եկեղեցու օծման արարողությունը։

Շենավանի Սուրբ Ամենափրկիչ *եկեղեցին կառուցվել է բարերարներ Ավետիք, Արկադի եւ Հենրիկ Գրիգորյանների հովանավորությամբ։ Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը 2014 թ. կատարել է Արագածոտնի թեմի առաջնորդ, Գերաշնորհ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը։ Եկեղեցին նախագծել են ճարտարապետներ Էդուարդ Գրիգորյանն ու իր կինը՝ Մերի Դանիելյանը։ Նորակերտ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է Արագածոտնի թեմի առաջնորդ տեր Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի ձեռամբ 2018 թ. սեպտեմբերի 30-ին։*

9. ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄ.

Աբովյան քաղաքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ *եկեղեցին կառուցվել է Ծառուկյան ընտանիքի բարերարությամբ։ Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2006 թ. օգոստոսի 24-ին։ Հիսուն մետր բարձրություն ունեցող հոյաշեն եկեղեցին նախագծել է ճարտարապետ Արտակ Ղուլյանը, նախագծի կառուցարկողներն են Հովհաննես Մեյրոյանը եւ Տիգրան Դադայանը։ Որմնանկարների հեղինակներն են հայր եւ որդի Աբրահամ ու Հայկ Ազարյանները։ Եկեղեցու քանդակազարդման աշխատանքներին մասնակցել են շուրջ քառասուն քանդակագործ եւ զարդագործ վարպետներ։*

2013 թ. մայիսի 14-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվել է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը։

2006 թ. պոլսահայ Մկրտիչ Սերթշիմշեքը, այցելելով Առինջ եւ տեսնելով Սուրբ Հովհաննես Մկրտիչ *եկեղեցու ոչ բարվոք վիճակը, խոստանում է ստանձնել սրբավայրի վերանորոգման հովանավորությունը։ Եկեղեցու վերանորոգման գործում բարերարին աջակցել են նաեւ պոլսահայ բարերարներ Պետրոս Շիրինօղլուն, Կ. Պոլսի Բերա թաղամասի Սուրբ Երրորդություն եկեղեցու թաղային խորհուրդը՝ Աբիգ Հայրապետյանի գլխավո-*

Հայրապետական թափոր

Ջեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝
վերաօծվեց Մայր Տաճարի Ավագ խորանի Պատարագի Սուրբ Սեղանը

Ջեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնվեց 21-րդ դարի չորրորդ Մյուռոնը
և կոչվեց «Դրոշմ ինքնության»

Տեսարան Մյուռոնօրհնության սրբազան արարողությունից

րությամբ, ինչպես նաեւ Առինջի գյուղապետ Գագիկ Սարգսյանը, Առինջի բնակիչ, գործարար Գեղամ Ջանվելյանը եւ այլ բարերարներ։

2007 թ. հուլիսի 7-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ձեռամբ Կոտայքի թեմի առաջնորդ տեր Առաքել եպիսկոպոս Քարամյանի ու մասնակցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան տեր Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի եւ Կոտայքի թեմի հոգեւոր դասի, վերաօծվել է Առինջ գյուղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ *եկեղեցին։*

Երեւան–Սեւան ավտոճանապարհի մերձակա աջակողմյան բլրի գագաթին՝ Առնջուց բերդավանքից քիչ հեռու, նորակերտ Սուրբ Աստվածածին եկեղեցին է։ Այն ունի խաչաձեւ կենտրոնագմբեթ հորինվածք։ Կառուցվել է սրբատաշ բազալտաքարերով։ Եկեղեցու միակ մուտքը գտնվում է արեւմտյան կողմում՝ երկու սյուների վրա հենված երկլանջ նախամուտքից։ Առինջ գյուղի Սուրբ Աստվածածին *եկեղեցու նավակատյաց հանդեսը, սպասավորությամբ Տ. Վաչե արք. Հովսեփյանի, Տ. Տարոն եպս. Ճերեճյանի, թեմական առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանի եւ Տ. Սիոն եպս. Ադամյանի, կատարել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը 2002 թ. հունիսի 1-ին։ Այդ օրը ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվել են եկեղեցու սուրբ խորանն ու խորանի սուրբ Տիրամոր պատկերը։*

Ձագավանքը *միջնադարյան Հայաստանի Այրարատ նահանգի նշանավոր հոգեւոր ու կրթամշակութային կենտրոններից էր։ Վանական համալիրը կործանվել է 1679 թ. հունիսի 4-ի Արարատյան (Գառնիի) երկրաշարժից։ 2011–2012 թթ. Ձագավանքի տարածքում պեղումներ են իրականացվել, իսկ 2014 թ. ավարտվել են վերականգնողական աշխատանքները (ճարտարապետ՝ Գայանե Նազլուխանյան) եւ ապրիլի 27-ին վերաօծվել է* Ձագավանքի Սուրբ Նշան *եկեղեցին։*

Գառնիի Սուրբ Խաչ *եկեղեցու կառուցումը հովանավորել է ՌԴ-ի Նիժեգորոդի մարզում ՀՀ պատվավոր հյուպատոս, գառնեցի գործարար Աղասի Ալեքյանը։ Նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կատարվել է 2015 թ. սեպտեմբերի 13-ին։*

Եղվարդի Սուրբ Սարգիս *եկեղեցին կառուցվել է հնամենի Սուրբ Սարգիս մատուռի հարեւանությամբ։ Եկեղեցու ճարտարապետն է Հրաչյա Գասպարյանը։ Եղվարդի Սուրբ Սարգիս եկեղեցին հանդիսավորապես օծվել է 2017 թ. հուլիսի 14-ին Կոտայքի թեմի առաջնորդ, տեր Առաքել արքեպիսկոպոս Քարամյանի ձեռամբ։*

Թեղենիքի Սրբոց Նահատակաց *եկեղեցու հիմնարկեքը 2000 թ. կատարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ տեր Ներսես արք. Պոզապալյանը։ Եկեղեցին կառուցվել է Սրբազան հոր, Պոզապալյան ընտանիքի եւ շվեյցարաբնակ բարերարներ Հակոբ Գաբրիելյանի եւ իր տիկնոջ հովանավորությամբ ու ջանքերով։ Թեղենիքի Ս. Նահատակաց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը 2003 թ. հուլիսի 5-ին կատարել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։*

Նոր Հաճնի Սուրբ Ամենափրկիչ *եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2011 թ.։ Կառուցվել է ճարտարապետ Ա. Ղուլյանի նախագծով եւ Գ. Ծառուկյանի բարերարությամբ։ Նոր Հաճնի նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2015 թ. հուլիսի 22-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ։*

Շարունակությունը՝ հաջորդիվ